ԼԵՌՆՑՈՒ ՀԱՅ ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

(Բաֆֆիի «Սամուէլ»-ից)

Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

Դա մի երգ էր, երգ լեռնական,
Լեռնցի աղջիկ էր երգում,—
Եւ թրռչում էր երգը նման
Հրպարտ արծուին ամպերում։
Նա զինուած էր, զրահաւորուած,
Ինչպէս ազնիւ իշխաններ...
Եւ լերը պարսիկն կ'ընկնէր խոցուած
Թէ մօտ գընալ խիզախէր։
Բնութեան կոյսը մերթ գովում էր
Իւր հայրենեաց հովիտներն,
Կամ գրրկւում էր, սրլանում էր
Զեփիւռի հետ գէս՝ սարերն։
Մերթ աղջիկը Նրւագում էր
Մութ անտառի մեղեդին,
Ուր դարաւոր կանաչում էր
Տերևախիտ եղևին։
Ցանկարծ ձայնը մեղմանում էր,
Ծաղկանց հեաը փրսփրսում,
Երբ կարմրելով որոնում էր
Սիրած եարին դաշտերում։

Բայց տեռ, ահա սաստկանում է,
Լեռ ու ձորում սաւառնում...
Աւաղ, յանկարծ նա դիպչում է
Ապառաժին ու լըռում։

Կարծես, հէնց այժմ—պարզ ու գրաւիչ
Դեռ հընչում է ականջիս
Դիւցազնուհու երգը դիւթիչ;
Զօրեղ ձայնը անտառից։
Կարծես, հէնց այժմ յափըշտակուած
Դեռ լըսում եմ մեղեդին
Եւ նայում եմ, նայում ապշած,
Ցաւերժական քաջ կոյսին։
Եւ այն խըրոխտ թուխ-թուխ գէմքից
Ինչքան եռանդ էր փայլում...
Սիրած եարին սև աչերից
Որքան սէր էր խոստացում։